



Լևոն Խեչոյան

Անձրեւ

Գործակալը գանգահարեց նրանց տուն ու հայտնեց, որ խաղարկության ժամանակ նրանց խնայողամարկդի գրքույկը շահել է: Ամուսնության երրորդ ամսին բաժանվել էին ծնողներից ու Ախալքալաքից եկել մայրաքաղաք: Հազար ռուբլի ծնողներն էին տվել, հազար էլ՝ աներանք: Այստեղ իրար հաջորդող հաջողությունները այնքան շատ էին, Մելիքը գարնացած էր, թե ոնց էին գյուղում մեծ քաղաքից ահաբեկված, իրեն հորդորում ետ կանգնել մայրաքաղաք գնալու մտադրությունից: Ձեռնափայտին կոթնած ծեր ուսուցիչը լուռ էր, երբ ինքը վերջնական հայտարարեց, որ գնալու է: Նա դարձյալ գլուխը կախ խորհում էր ու ոչ մի բառ չասաց՝ գնաց տուն:

Վարձով տունը, հեռախոսն էլ մեջը, այնքան հեշտությամբ գտան, որ նույնիսկ կարելի էր գարնանալ: Մտածում էին, որ մայրաքաղաքում շուտով ծանոթներ կունենան ու իրենց էլ գանգահարողներ կլինեն: Մի թաղամաս այն կողմ իրենց կողմերից մի պաշտոնյա էր բնակվում, երկու օրում կարգավորեց Մելիքի աշխատանքի հարցը, ու նա երկուշաբթվանից պիտի աշխատեր, այն էլ քաղաքի ամենանեկամտաբեր երթուղու վրա: Նինելի աչքերը եր ջանկությունից շողում էին, խնայողամարկդում հազար ռուբլի շահել էին, ու իրենց ունեցած գումարը կդառնար երեք հազար: Նա առաջարկեց այդ գումարից մի քիչ առանձնացնել ու իրենց երկրացի պաշտոնյայի լավության տակ չննալու համար մի լավ նվեր առնել: Կամ նրան, կնոջ հետ հրավիրել իրենց տուն՝ խորովածի, վերջում նվերը մատուցել: Մելիքը մտածեց, հետո ասաց, որ խելացի բան չի խոշոր գումարից մի քանի հարյուր ռուբլի նվերի համար ծախսելը: Նվերը հնարավոր է աշխատավարձից կամ կողքից եկած եկամուտից էլ առնել: Նինելը առաջարկեց

գոնն մարդամեջ դուրս գալու համար գնալ դերձակի մոտ ու իրեն կապույտ ու լայն շրջագգեստ պատվիրել: Հետո ինքն էլ հրաժարվեց՝ մտածելով, որ եղածները կարող է ձեռափոխել եւ լավ մտածելու դեպքում՝ գնալու տեղ էլ չկար: Մելիքը շատ էր երջանիկ, ականջը սեղմած Նինելի կլորիկ փորին, շշուկով հայտարարեց, որ մինչեւ գարուն էլի մի հինգ հարյուր ռուբլի ետ կգցեն ու կգնեն ամենալեժան մեքենաներից: Եկող տարի մեքենայով կգնան գյուղ, մինչ այդ երեխան էլ մի տարեկան կդառնա: Նինելն այնքան էլ կապված չէր գյուղի հետ: Մելիքին չտխրեցնելու համար համա ձայնեց, մտածելով, որ մեկնելու ժամանակը որ գա, գուցե եւ ծովափ գնան: Գյուղում Մելիքի սիրած աղջիկը ամուսնացել էր ուրիշի հետ ու նա անձրեւ օրերին շատ էր տխրում: Դրա համար էլ գյուղից դուրս գալու գաղափարին բոլորից շատ Նինելն էր կողմնակից: Եվ ճիշտ դուրս եկավ, Մելիքը այլեւս չէր թախծում արցունքավորվելու աստիճան: Այստեղի անձրեւները մի քիչ ուրիշ տեսակ էին՝ խշշոց ու բուրմունք չունեին, տաք էին եւ չէին էլ կերպարանավորվում: Մինչեւ երկուշաբթի մի օր էր մնացել, ու նրանք փորձարկում էին կանգառների անունները, որ Մելիքը բարբառային պայթեղ խուլ բաղաձայնները շխտթի ամեն բառի մեջ ու երթեւեկողների մեջ ծիծաղ չառաջացնի: Մելիքը կանգառների անունները ցուցակավորել էլ թղթի վրա ու քայլում էր խոհանոցից սենյակ, սենյակից խոհանոց՝ հայտարարելով կանգառները . «Հարքելի քաղաքացիներ, շամփայն գինիների գործարան, խնդրում եմ տոմսեր վերցրեք, ընգերներ, ով է բանալի կորցրել, թող մոտենա ինձ»: Նինելը մի քանի անգամ ուղղեց, որ արտասանվում է ոչ թե «հարքելի», այլ՝ «հարգելի», ոչ թե «շամփայն», այլ՝ «շամպայն», արտասանվում է «ընկերներ», կ-ի շեշտադրությամբ եւ շատ հնարավոր է, որ բանալիի փոխարեն կորցրած լինեն փողի քսակ, հարկավոր է հայտարարել՝ «Ով է դրամապանակ կորցրել, թող մոտենա ինձ»: Դրամապանակը արտասանել անպայման պ-ով: Ու հայտարարությունը հարկավոր է մի քիչ էլ վստահ տոնով անել, որ քաղաքաբնակների կողմից ուշադրության արժա նանա: Արդեն երկու շաբաթ էր, որ նրանք ամեն օր, առավոտից մինչեւ իրիկուն կրկնում էին երթողու տասնհինգ կանգառների անունները՝ գտելով բարբառային պայթեղ բաղաձայններից:

Նինելը հետո հիշեց շահած հազար ռուբլին, հիշեց, որ բուրմունք եւ կերպարանափոխություն ունեցող անձրեւից կարողացել են խուսա փել, սիրտը թրթռաց, համբուրեց Մելիքի այտը: Պատկերացրեց, թե նա ոնց կնստի

տոմսավաճառի բարձր աթոռին, մագերը խնամքով փայլեցրած, կողքի սանրած ու առանց բարբառային պայթեղ խուլերի կհայտարարի՝ «շամպայն գինիների» կանգառը: Այս հաջողությունը, որ իրենց վրա է թափվել, գուցե եւ օգնի, որ Մելիքը մի տեղ հեռակա բաժին ընդունվի սովորելու ու գիտեր, որ ինքը Մելիքին կօգնի, մարդ կդարձնի:

Երկուշաբթին՝ աշխատանքային օրը ավարտվում էր: Մելիքը մի քիչ երջանիկ էր, մի քիչ՝ հոգնած: Պլանը կատարել էր, մի բան էլ ավելի: Վերջին երթուղին էլ կկատարեին ու տուն կգնար: Սկսեց տաք անձրեւ տեղալ, մարդիկ շտապով լցվում էին խանութներն ու ավտոբուսը: Այդ պահին տանը Նինելը բազմոցին ննջում էր: Սարսափահար նա վեր թռավ, վախեցած՝ մանկան հանկարծակի շարժումից... Մայթերին ծաղիկների նման բացվեցին գունավոր անձրեւանոցները: Հետո բարձունքի կանգառներից մեկում Մելիքը նկատեց, որ ներքեւում, գույնզգույն լույսերի մեջ փոված քաղաքը անսահմանորեն գեղեցիկ է: Ավտոբուսը ուզում էր շարժվել, հանկարծ մեկը կանչեց, ձայնը շատ էր ծանոթ: Նայեց ավտոբուսում եղածների դեմքին, նայեց շուրջը: Կանչը կրկնվեց, թիկունքից՝ իրենց գյուղացիների ձայնային ելեւէջներով . «Մելիք, Մելիք...» արտասանողը ավտոբուսի մեջ չէր: Գլուխը դուրս հանեց, տեսավ՝ անձրեւն էր: Ավտոբուսի դռները փակվեցին, սլացող բեռնատարը, թափքով հպանցիկ բախվեց դռների արանքից դուրս մնացած Մելիքի գլխին: Խշացող, տաք ու հորդառատ անձրեւ էր գալիս: